

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ս/թ հունիսի 27-ին կայացավ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստ՝ նախագահությամբ Վ. Ալեքսանյանի, քարտուղարությամբ՝ Ս. Խաչատրյանի: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամները:

Օրակարգ՝

1. 2013-2014թթ. ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում /Ձեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:
2. 2013-14թթ. ուսումնական տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Ձեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:
3. Այլ հարցեր /Ձեկուցող՝ դեկան Վ. Ալեքսանյան/:

ԼՄԵՅԻՆ՝

Օրակարգի առաջին կետի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ձեկուցողը հանգամանալի անդրադարձավ 2014թ. մայիսին ֆակուլտետում հինգ մասնագիտություններով /Պատմություն, Հայոց լեզու և գրականություն, Մանկավարժություն և հոգեբանություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն/ կազմակերպված ամփոփիչ քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը՝ վերլուծելով վերոհիշյալ գործընթացները թե բովանդակային, թե վիճակագրական առումներով: Նախ արձանագրվեց, որ դրանք ունեցել են պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողները ամփոփիչ քննություններին ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում եղել են ուսումնառության ընթացքում ակադեմիական ցածր առաջադիմություն գրանցած սովորողներ: Հարկ է ընդգծել, որ մի շարք ուսանողներ իրենց անթերի պատրաստվածությամբ

իրապես գոհացրեցին հանձնաժողովների անդամներին: Ֆակուլտետի 33 ուսանող ստացավ միայն գերազանց գնահատական:

Նախորդ տարիների համեմատությամբ նկատելի առաջընթաց արձանագրվեց ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացում: Այս տարվա ավարտական աշխատանքների պաշտպանությունը թե թեմաների ընտրության առումով, թե ներկայացման որակով, թե կատարողների ինքնուրույնության աստիճանով մեկ քայլ առաջ էր նախորդ տարվանից: Զեկուցողը շեշտեց, որ առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում.

- առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Բացի գրավոր աշխատանքի ձևակերպման որակը մեծ ուշադրություն է դարձվել նաև ուսանողների կողմից աշխատանքի բանավոր ներկայացման որակին:
- Կարևոր հանգամանք է երկրորդ և երրորդ կուրսերում ամբիոնների վարիչների կողմից կուրսային աշխատանքների պաշտպանությանը լուրջ ուշադրություն հատկացնելը: Սա ևս նպաստում է ավարտական աշխատանքի ձևակերպման և ներկայացման որակի բարձրացմանը:
- Որակի բարձրացմանը, անշուշտ, նպաստել են ավարտական և կուրսային աշխատանք կատարելու մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերի ձևակերպումը:
- Զգալի էր նաև գիտական ղեկավարների մեծ մասի արհեստավարժ աշխատանքը:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողները ավարտական աշխատանքները ներկայացրեցին ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ: Օտար լեզուների տիրապետման բարձր մակարդակ ցուցաբերեցին «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» բաժինների ուսանողները: Վերջիններս իրենց իմացության մակարդակով գրեթե չեն զիջում այդ ասպարեզում հանրապետությունում լուրջ ավանդույթներ ունեցող ուսումնական հաստատությունների շրջանավարտներին:

«Պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսանողները նույնպես աչքի ընկան բարձր պատրաստվածությամբ:

Քննական հանձնաժողովների նախագահները թե բանավոր խոսքում և թե իրենց թողած գրավոր հաշվետվություններում գոհունակություն հայտնեցին քննությունների կազմակերպման մակարդակից և որակից: Թերություններ արձանագրվեցին, որոնք վերաբերում էին քննական հարցաշարերին և հարցատոմսերին: Մատնանշվեցին նաև այլ թերություններ, որոնք գերազանցապես ունեին տեխնիկական բնույթ: Այդ ամենը անհրաժեշտ է նկատի առնել հաջորդ տարիների քննությունների հարցաշարերն ու հարցատոմսերը կազմելիս: */2013-2014 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության մասին վիճակագրական տվյալները կցվում են/:*

Զեկուցողը իր խոսքում մատնանշեց մի շարք ընդհանուր թերություններ, որոնք վերացնելու դեպքում շրջանավարտի մասնագիտական որակը ավելի բարձր կլինի.

- ամփոփիչ քննությունների հարցաշարերը շատ դեպքերում համընկնում են տվյալ դասընթացի տարբեր մոդուլների հարցաշարերին, ինչն ըստ էության դառնում է կրկնություն, քանի որ ուսանողը տարբեր կիսամյակներում հանձնել է քննություն և գնահատվել:
- Քննություն հանձնողների մեծ մասը դրսևորում է տեսական նյութի լավ իմացություն և բավարարվում է այդ նյութի պարզ վերաշարադրմամբ, բացակայում են ինքնուրույն մտածողությունը և վերլուծական կարողությունները: Անհրաժեշտ է կազմել այնպիսի հարցաշարեր, որոնք կստուգեն շրջանավարտի և մասնագիտական գիտելիքը, և նրա մտածելու կարողությունը, ինչպես նաև գիտական աշխարհայացքը:
- Մյուս կարևոր բացը օտարալեզու գրականությունից օգտվելու դժվարությունն է: Ուսանողների ճնշող մեծամասնության գիտելիքները ձևավորվում են մայրենի լեզվով հրատարակված ուսումնասիրությունների հիման վրա: Սակայն սա ընդհանուր թերություն է, որը զգալի է շատ տեղերում:
- Նկատելի էր նաև ուսանողների պրակտիկ դասընթացների ոչ բավարար լինելը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը:

Նրանք անդրադարձան ուսանողների մեծամասնության մոտ ինքնուրույն մտածողության պակասին, սեփական մտքերի շարադրման դժվարություններին: Գերազանցապես նույնությամբ վերարտադրում են ուսումնական ձեռնարկներում և զանազան գրքերում զետեղված նյութը: Գերադասելի է, որ ամփոփիչ քննությունները լինեն ինքնուրույն խոսք և ինքնուրույն մտածողություն հանդես բերելու հարթակ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2014թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:*

ԼՍԵՑԻՆ՝

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց, որ գարնանային քննաշրջանը նախապատրաստվել և կազմակերպվել է պատշաճ մակարդակով: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասն բացատրվել է քննությունների և ստուգարքների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Ուսանողների ակտիվությունը խթանելու նպատակով դեկանատը քննաշրջանից առաջ հայտարարել է, որ կիսամյակի ընթացքում ակտիվ և մշտապես պատրաստ ուսանողները ստուգարքներ կստանան առանց լրացուցիչ հարցումների: Այս քայլը դրական դեր է ունեցել կիսամյակի ընթացքում սեմինար և գործնական աշխատանքներին ընդհանուր ակտիվություն ապահովելու առումով:

2013-2014թթ. ուսումնական տարվա գարնանային քննաշրջանին մասնակցել է 190 ուսանող: Գերազանց առաջադիմությամբ աչքի է ընկել 10 ուսանող, որոնք փայլել են իրենց ակադեմիական մակարդակով՝ բավարարելով քննող դասախոսների ամենախիստ պահանջները: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 72.6%:

Դրան զուգահեռ ֆակուլտետի հինգ մասնագիտությունների գծով /52 ուսանող/ քննաշրջանը փակել են ակադեմիական պարտքերով: Դրանց մի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ընդհանուր գծերով ակադեմիական պարտքերի պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Պատմություն -- պարտք ունի 14 ուսանող,

Մանկավարժություն և հոգեբանություն -- պարտք ունի 7 ուսանող,

Ֆրանսերեն լեզու -- պարտք ունի 4 ուսանող,

Անգլերեն լեզու -- պարտք ունի 18 ուսանող,

Հայոց լեզու և գրականություն -- պարտք ունի 9 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոց. Վ. Ավագյանը, մ.գ.թ. դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ.,դոց. Ա. Սարհատյանը: Ելույթ ունեցողները փաստեցին, որ առկա ուսուցման համակարգում ակնառու կերպով աճել է քննաշրջանին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Որակը բարձրացնելու համար կարևոր է կանոնակարգել ինքնուրույն աշխատանքի ժամերը, դրանք դարձնել արդյունավետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *2013-14թթ. ուսումնական տարվա զարնանային քննաշրջանի կազմակերպական աշխատանքները և արդյունքները համարել բավարար:*

Օրակարգի այլ հարցեր կետի տակ՝ խոսվեց նոր ուսումնական տարվան ընդառաջ առարկայական ծրագրերի /portfolio/ պատրաստ լինելու մասին: Տրվեցին որոշ բացատրություններ ծրագրերի կազմման կապակցությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ս. Խաչատրյան